ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳԵՂԱՐՎԵՍՏԻ
ՊԵՏԱԿԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ..... 4
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ 6
ՄՐՑՈՒՆԱԿ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՌՈՂՋ ՄԻՋԱՎԱՅՐ 8
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ/ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ..... 27
ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ, ՆԵՐԱՌԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ, ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԵՏ ԱՄՈՒՐ ԿԱՊԵՐ 35
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ..... 42
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 47
ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ..... 52

ՆԱԽԱԲԱՆ

Սույն փաստաթուղթը միտված է Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի (այսուհետ՝ ՀԳՊԱ) հաշվետվողականության և գործունեության թափանցիկության ապահովմանը և ներկայացնում է 2023 թվականին ՀԳՊԱ-ի կողմից իրականացված գործունեության և ֆինանսական մուտքերի ու ծախսերի համառոտ հաշվետվությունը:

Հաշվետվությունն ամփոփում է տեղեկատվություն ՀԳՊԱ-ի գործունեության հետևյալ կարևորագույն ուղղություններով.

- Կրթական ծրագրերը և ակադեմիական միջավայրը
- Հետազոտությունը և ստեղծագործական գործունեությունը
- Արդյունավետ համագործակցությունը և հասարակության հետ երկխոսությունը
- Աջակցությունը ուսանողներին, ներառական միջավայրը և կապերը շրջանավարտների հետ
- Առաջնորդությունը և արդյունավետ կառավարումը
- Ֆինանսական հաշվետվությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

1. Դանիել Դանիելյան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ
2. Սեդրակ Սիմոնյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթների համակարգող
3. Հովհաննես Գևորգյան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության իրավաբանական վարչության պետ
4. Լուսինե Գրիգորյան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ծրագրերի իրականացման վարչության պետ
5. Էդուարդ Ներսիսյան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ժամանակակից արվեստի վարչության պետի տեղակալ
6. Սուրեն Սաֆարյան	Հայաստանի նկարիչների միության նախագահ
7. Մարինա Հակոբյան	Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրեն
8. Էմին Մկրտչյան	«Զանգակ» հրատարակչության գործադիր տնօրեն
9. Գարեգին Էվանգուլյան	«Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր նկարիչ
10. Սուսաննա Կիրակոսյան	«Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամի վերականգնման բաժնի աշխատակից, մանրանկարիչ
11. Գարեգին Դավթյան	Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի քանդակագործության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր

12. Արամ Իսաբեկյան	ՀՀ ժողովրդական նկարիչ, Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի գեղանկարչության և գծանկարչության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր
13. Արթուր Հովհաննիսյան	Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի կերպարվեստի ֆակուլտետի գեղանկարչության և գծանկարչության ամբիոնի դոցենտ, արվեստագիտության թեկնածու
14. Աշոտ Գրիգորյան	Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի արվեստագիտության և հումանտիտար գիտությունների ամբիոնի պրոֆեսոր, ճարտարապետության դոկտոր
15. Մեխակ Էլբակյան	Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի կերպարվեստի ֆակուլտետի գեղանկարչության և գծանկարչության ամբիոնի դոցենտ
16. Ալիսա Դանիելյան	Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի կերպարվեստի ֆակուլտետի ուսանող
17. Անաստասիա Ալաջաջյան	Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանող
18. Դավիթ Սահակյան	Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի կերպարվեստի ֆակուլտետի ուսանող
19. Աննա Գևորգյան	Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանող
20. Մարիաննա Հովհաննիսյան	Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանող

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

Մկրտիչ Այվազյան	Խորհրդի նախագահ, ռեկտորի պաշտոնակատար, գիտությունների թեկնածու, դոցենտ
Եկատերինա Կաշինա	Ուսումնագիտական գծով պրոռեկտորի պաշտոնակատար, ուսումնամեթոդական մշակումների և ուսումնական գործընթացի հաշվառման բաժնի ղեկավար
Ստեփան Եզդողլյան	Ֆինանսատնտեսական գծով պրոռեկտոր
Էդիկ Վարդանյան	Կերպարվեստի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր
Ավետիք Ավետիսյան	Դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր
Վիգեն Ղազարյան	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
Արարատ Աղասյան	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
Հակոբ Սիմոնյան	Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
Նազենի Ղարիբյան	Արվեստագիտության թեկնածու, դոցենտ
Հայկ Փայասլյան	Համակարգչային գրաֆիկայի և հագուստի մոդելավորման ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր
Փարավոն Միրզոյան	ՀՀ ժողովրդական նկարիչ, գեղանկարչության և գծանկարչության ամբիոնի պրոֆեսոր
Աբրահամ Սահակյան	Գրաֆիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր
Քնարիկ Ավետիսյան	Արվեստագիտության և հումանիտար գիտությունների ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ
Վահե Գասպարյան	Գծանկարչության և գունանկարչության ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ

Գրիգոր Գրիգորյան	Գծանկարչության և գունանկարչության ամբիոնի դոցենտ, արվեստագիտության թեկնածու
Ստեփան Գյուլխասյան	Դիզայնի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր
Անահիտ Օհանյան	Գիտական քարտուղար
Նորանուշ Կարապետյան	Կադրերի հաշվառման և ընդհանուր բաժնի ղեկավար, Արհեստակցական կազմակերպության նախագահ
Ռուզաննա Մինասյան	Կրթական ծրագրերի մշակումների բաժնի ղեկավար
Վահագն Ղուկասյան	Գյումրու մասնաճյուղի տնօրեն
Ղազար Ղազարյան	Դիլիջանի սրորաբաժանման ղեկավար, դոցենտ
Աննա Մանուկյան	Գեղանկարչություն կրթական ծրագրի ուսանող
Մարիա Ֆրանկյան	Դիզայն կրթական ծրագրի ուսանող
Դայանա Աղաջանյան	Ինտերիերի դիզայն կրթական ծրագրի ուսանող
Վիկտոր Մելիքյան	Համակարգչային գրաֆիկա կրթական ծրագրի ուսանող
Մաղլեն Օհանյան	Արվեստաբանություն կրթական ծրագրի ուսանող
Դավիթ Պետրոսյան	Արվեստաբանություն կրթական ծրագրի ուսանող
Սվետլանա Ավագյան	Հագուստի մոդելավորում կրթական ծրագրի ուսանող
Նորայր Մելիքյան	Գրաֆիկա կրթական ծրագրի ուսանող

ՄՐՑՈՒՆԱԿ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՌՈՂՋ ՄԻՋԱՎԱՅՐ

2023-2027 թվականների ռազմավարական ծրագրի համաձայն՝ այս ոլորտներում ՀԳՊԱ-ի նպատակներն են ՀՀ որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի պահանջներին համահունչ ստեղծագործությունը, նորարարությունը և ձեռներեցությունը խրախուսող կրթական ծրագրերի իրականացումը, որակյալ ու մրցունակ մասնագետների պատրաստումը, ինչպես նաև կրթական ծրագրերի մրցունակության և միջազգային ճանաչելիության մեծացումը: 2023 թվականի ընթացքում նշված նպատակների ուղղությամբ ՀԳՊԱ-ի կողմից կատարված գործունեության արդյունքներն են.

ա. Ուսանողների վիճակագրական տվյալներ

2023-2024 ուսումնական տարվա բակալավրի կրթական ծրագրով ընդունելությունը իրականացվել է՝ ըստ ՀԳՊԱ-ի մասնագետների մշակած և ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված առաջադրանքների և գնահատման չափանիշների, որոնք հասանելի են ՀԳՊԱ-ի պաշտոնական կայքէջում: Մագիստրոսի կրթական ծրագրով 2023-2024 ուսումնական տարվա ընդունելությունը իրականացվել է՝ ըստ «ՀԳՊԱ մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության քննությունների անցկացման կարգ»-ի: Դիմորդների բաշխումն՝ ըստ ՀԳՊԱ-ի, Գյումրու մասնաճյուղի և Դիլիջանի ստորաբաժանման հետևյալն է՝

Բակալավրի կրթական ծրագիր

Երևան	192
Գյումրի	46
Դիլիջան	1
Ընդամենը	**239**

Մագիստրոսի կրթական ծրագիր

Երևան	42
Գյումրի	12
Ընդամենը	**54**

Մրցույթի արդյունքում 2023-2024 ուսումնական տարվա ընդունելության տվյալները հետևյալն են՝

Բակալավրի կրթական ծրագիր

	Պետ. պատվեր	Վճարովի	Ընդամենը
Երևան	42	145	187
Գյումրի	10	35	45
Դիլիջան	1	0	1
Ընդամենը	**53**	**180**	**233**

Մագիստրոսի կրթական ծրագիր

	Պետ. պատվեր	Վճարովի	Ընդամենը
Երևան	17	25	42
Գյումրի	2	9	11
Ընդամենը	**19**	**34**	**53**

2023 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ ՀԳՊԱ-ի ուսանողների ընդհանուր թիվը.

Բակալավրի կրթական ծրագիր

	Պետ. պատվեր	Վճարովի	Ընդամենը
Երևան	190	529	719
Գյումրի	40	79	119
Դիլիջան	8	5	13
Ընդամենը	**238**	**613**	**851**

Մագիստրոսի կրթական ծրագիր

	Պետ. պատվեր	Վճարովի	Ընդամենը
Երևան	33	33	66
Գյումրի	3	9	12
Ընդամենը	**36**	**42**	**78**



Վերջին հինգ տարիների վիճակագրական պատկերը հետևյալն է.

Դիմորդների և ընդունվածների բաշխումն՝ ըստ մասնաճյուղերի և ուսումնական տարիների

Բակալավրի կրթական ծրագիր										
	2019-2020		2020-2021		2021-2022		2022-2023		2023-2024	
	դիմած	ընդունված	դիմած	ընդունված	դիմած	ընդունված	դիմած	ընդունված	դիմած	ընդունված
Երևան	175	157	268	205	225	189	213	200	192	187
Գյումրի	39	38	31	28	34	30	47	46	46	45
Դիլիջան	7	5	9	7	3	3	4	3	1	1
Ընդամենը	***221***	***200***	***308***	***240***	***262***	***222***	***264***	***249***	***239***	***233***



Մագիստրոսի կրթական ծրագիր										
	2019-2020		2020-2021		2021-2022		2022-2023		2023-2024	
	դիմած	ընդունված	դիմած	ընդունված	դիմած	ընդունված	դիմած	ընդունված	դիմած	ընդունված
Երևան	54	36	82	51	46	33	89	43	42	42
Գյումրի	5	4	11	11	15	15	2	2	12	11
Ընդամենը	***59***	***40***	***93***	***62***	***61***	***48***	***91***	***45***	***54***	***53***



Ուսանողների ընդհանուր թիվը ՀԳՊԱ-ում, Գյումրու մասնաճյուղում և Դիլիջանի ստորաբաժանումում՝ ըստ կարգավիճակի (պետ. պատվեր / վճարովի)

Բակալավրի կրթական ծրագիր															
	2019-2020			2020-2021			2020-2021			2022-2023			2023-2024		
	պետ. պատվեր	վճարովի	ընդամենը	պետ. պատվեր	վճարովի	ընդամենը	պետ. պատվեր	վճարովի	ընդամենը	պետ. պատվեր	վճարովի	ընդամենը	պետ. պատվեր	վճարովի	ընդամենը
Երևան	189	392	581	190	429	619	182	466	648	188	534	722	190	529	719
Գյումրի	39	64	103	36	58	94	36	59	95	40	83	122	40	76	116
Դիլիջան	12	8	20	12	9	21	12	8	20	10	9	19	8	5	13
Ընդամենը	***240***	***464***	***704***	***238***	***496***	***734***	***230***	***533***	***763***	***238***	***626***	***863***	***238***	***610***	***848***



Մագիստրոսի կրթական ծրագիր															
	2019-2020			2020-2021			2021-2022			2022-2023			2023-2024		
	պետ. պատվեր	վճարովի	ընդամենը	պետ. պատվեր	վճարովի	ընդամենը	պետ. պատվեր	վճարովի	ընդամենը	պետ. պատվեր	վճարովի	ընդամենը	պետ. պատվեր	վճարովի	ընդամենը
Երևան	35	34	69	33	53	86	35	39	74	37	38	75	33	33	66
Գյումրի	3	10	13	3	11	14	6	21	27	6	11	17	3	9	12
Ընդամենը	***38***	***44***	***82***	***36***	***64***	***100***	***41***	***60***	***101***	***43***	***49***	***92***	***36***	***42***	***78***



ՀԳՊԱ-ի ընդհանուր ուսանողների թիվը 2023 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ

	2019-2020	2020-2021	2021-2022	2022-2023	2023-2024
Երևան	650	705	722	797	785
Գյումրի	116	108	122	139	131
Դիլիջան	20	21	20	19	12
Ընդամենը	***786***	***834***	***864***	***955***	***928***



Կարևոր է նաև նշել, որ 2023 թվականի ընթացքում ՀԳՊԱ-ից ազատվել և հեռացվել է 104 ուսանող: 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում ՀԳՊԱ-ից ազատվել և հեռացվել է 65 ուսանող, իսկ 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում՝ 39 ուսանող: Նշված ուսանողներից 57-ը ազատվել են իրենց դիմումի համաձայն, 33-ը հեռացվել են, իսկ 14-ը գտնվում են տարկետման մեջ:

Ազատվածների և հեռացվածների բաշխումն՝ ըստ մասնաճյուղերի և ուսումնական կիսամյակների

Բակալավրի կրթական ծրագիր

	2022-2023 2-րդ կիս.	2023-2024 1-ին կիս.	Ընդամենը 2023-ին
Երևան	40	27	67
Գյումրի	15	10	25
Դիլիջան	1	0	1
Ընդամենը	**56**	**37**	**93**

Մագիստրոսի կրթական ծրագիր

	2022-2023 2-րդ կիս.	2023-2024 1-ին կիս.	Ընդամենը 2023-ին
Երևան	9	1	10
Գյումրի	0	1	1
Ընդամենը	**9**	**2**	**11**

Բ. Որակավորումներ

2022-2023 ուսումնական տարում Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիան, Գյումրու մասնաճյուղը և Դիլիջանի ստորաբաժանումը ավարտել է 225 ուսանող, որոնցից 181-ը՝ բակալավրի կրթական աստիճանով և 44-ը՝ մագիստրոսի կրթական աստիճանով: Պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովները գրանցել են ՀԳՊԱ-ի շրջանավարտների բավական բարձր մակարդակ, ինչն արտահայտվում է ավարտական ատեստավորման արդյունքներով.

Բակալավրի կրթական աստիճան

Մասնագիտությունը	Ուսանողների ընդհանուր թիվը	Գնահատականը*						
		A	B	C	D	E	FX	W
Դիզայն	12	4	6	1	1	-	-	-
Ինտերիերի դիզայն	10	-	10	-	-	-	-	-
Հագուստի մոդելավորում	42	15	24	3	-	-	-	-
Համակարգչային գրաֆիկա	35	15	16	3	1	-	-	-
Կիրառական արվեստ	5	1	-	2	1	1	-	-
Քանդակագործություն	3	2	1	-	-	-	-	-
Գեղանկարչություն	13	10	3	-	-	-	-	-
Գրաֆիկա	22	17	5	-	-	-	-	-
Արվեստաբանություն	2	-	2	-	-	-	-	-
Ընդամենը	**144**	**64**	**67**	**9**	**3**	**1**	**-**	**-**
Գյումրու մասնաճյուղ								
Հագուստի մոդելավորում	6	6	-	-	-	-	-	-
Դիզայն	7	7	-	-	-	-	-	-
Կիրառական արվեստ	1	1	-	-	-	-	-	-
Քանդակագործություն	1	1	-	-	-	-	-	-
Գեղանկարչություն	9	8	1	-	-	-	-	-
Գրաֆիկա	5	5	-	-	-	-	-	-
Արվեստաբանություն	2	1	1	-	-	-	-	-
Ընդամենը	**31**	**29**	**2**	**-**	**-**	**-**	**-**	**-**
Դիլիջանի ստորաբաժանում								
Կիրառական արվեստ	6	-	4	1	1	-	-	-
Ընդամենը	**6**	**-**	**4**	**1**	**1**	**-**	**-**	**-**
Ընդամենը	***181***	***93***	***73***	***10***	***4***	***1***	***-***	***-***

Մագիստրոսի կրթական աստիճան

Մասնագիտությունը	Ուսանողների ընդհանուր թիվը	Գնահատականը*						
		A	B	C	D	E	FX	W
Դիզայն	4	4	-	-	-	-	-	-
Հագուստի մոդելավորում	5	3	2	-	-	-	-	-
Համակարգչային գրաֆիկա	6	4	1	1	-	-	-	-
Կիրառական արվեստ	6	6	-	-	-	-	-	-
Քանդակագործություն	1	1	-	-	-	-	-	-
Գեղանկարչություն	3	2	1	-	-	-	-	-
Գրաֆիկա	3	3	-	-	-	-	-	-
Արվեստաբանություն	1	1	-	-	-	-	-	-
Ընդամենը	**29**	**24**	**4**	**1**	**-**	**-**	**-**	**-**
Գյումրու մասնաճյուղ								
Հագուստի մոդելավորում	4	4	-	-	-	-	-	-
Կիրառական արվեստ	3	2	1	-	-	-	-	-
Գեղանկարչություն	2	2	-	-	-	-	-	-
Գրաֆիկա	3	3	-	-	-	-	-	-
Քանդակագործություն	1	1	-	-	-	-	-	-
Արվեստաբանություն	2	1	1	-	-	-	-	-
Ընդամենը	**15**	**13**	**2**	**-**	**-**	**-**	**-**	**-**
Ընդամենը	**44**	**37**	**6**	**1**	**-**	**-**	**-**	**-**

* Անցողիկ գնահատականներ՝ A (95%-100%), B (85%-94%), C (75%-84%), D (65%-74%), E (60%-64%): Անբավարար՝ FX (մինչև 59%): Չներկայացած՝ W:





Գ. Դասախոսական կազմ

2023-2024 ուսումնական տարվա ուսումնական գործընթացը ՀԳՊԱ-ում ապահովում է 174 դասախոս (37-ը Գյումրու մասնաճյուղում), որոնցից 108-ը՝ հիմնական (որից 19-ը՝ Գյումրու մասնաճյուղում), 66-ը՝ համատեղությամբ և ժամավճարային (որից 15-ը՝ Գյումրու մասնաճյուղում): ՀԳՊԱ-ի պրոֆեսորադասախոսական կազմը՝ ըստ ամբիոնների, ներկայացված է ՀԳՊԱ-ի պաշտոնական կայք-էջի «Դասախոսներ» բաժնում՝ http://safa.am/?page_id=1983:

Դ. Ուսումնական գործընթացի բարելավում

2023 թվականի ընթացքում ՀԳՊԱ-ն ակտիվորեն շարունակել է բակալավրի կրթական ծրագրերում մոդուլային ուսուցման իրականացումը: Այս շրջանակում Կրթական ծրագրերի մշակումների բաժնի և ամբիոնների համագործակցությամբ հաջողությամբ ամփոփվել են հետևյալ գործողությունները՝

- մշակվել են մոդուլային ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրերի երրորդ կուրսի մոդուլները,

- մշակվել է «Համագործակցային նախագիծ» մոդուլի հայեցակարգը և իրականացման ուղեցույցը,
- Դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետի երրորդ կուրսերի համար փորձարկվել և իրականացվել է «Համագործակցային նախագիծ» մոդուլը՝ ոլորտում առաջատար կազմակերպությունների և պատվիրատուների հետ: Գործընկեր բոլոր կազմակերպությունների հետ («Ռեֆլեքսիվ լաբս» ՍՊԸ, «Արմնոմադս» ՍՊԸ, «Մեսսիվ» ՍՊԸ, «Արթստեփ» ՍՊԸ) կնքվել են համագործակցության հուշագրեր գործընթացի շարունակականությունն ապահովելու նպատակով: Որոշ դեպքերում պատվիրատուն եղել է ՀԳՊԱ-ն: Բոլոր նախագծերը հաջողությամբ փորձարկվել և ամփոփվել են: Նախագծերի մասին ամփոփիչ տեսաշարքերը և/կամ վիդեոշարքերը հասանելի կլինեն 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանից հետո: Կերպարվեստի ֆակուլտետի համար «Համագործակցային նախագիծ» մոդուլը կանցկացվի 2023-2024 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում:
- Նախնական մշակումներ են իրականացվել նոր «Անիմացիա» բակալավրի կրթական ծրագրի ուղղությամբ, որի շրջանակում ուսումնասիրվել է միջազգային լավագույն փորձը: Այս նպատակով նաև հանդիպումներ են անցկացվել Իռլանդիայի արվեստի, դիզայնի և տեխնոլոգիայի ինստիտուտի պրոֆեսորդասախոսական կազմի հետ և՛ Դուբլինում, և՛ Երևանում՝ անդրադարձ կատարելով կայացած կրթական ծրագրերի փորձին:
- լրամշակվել են բակալավրի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանություններին ներկայացվող պահանջները համապատասխան ստորաբաժանումների հետ համատեղ,
- հստակեցվել են մոդուլների գնահատման ձևերը,
- նախնական մշակումներ են կատարվել նաև կրթական ծրագրերի մշակման ձեռնարկի վերանայման ուղղությամբ,

- նախնական լրամշակումներ են կատարվել նաև պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական զարգացմանն ուղղված հայեցակարգի ուղղությամբ:

Ուսումնական գործընթացի բարելավման նպատակով մշակվել/վերանայվել են մի շարք ներքին փաստաթղթեր.

- ՀԳՊԱ գնահատման և ակադեմիական ազնվության քաղաքականություն,
- ՀԳՊԱ ամփոփիչ ատեստավորման կարգ,
- ՀԳՊԱ ուսանողական նպաստի տրամադրման կարգ,
- ՀԳՊԱ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ,
- ՀԳՊԱ մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության կարգ:

Նոր կրթական ծրագրերին և ՀԳՊԱ գնահատման և ակադեմիական ազնվության քաղաքականությանը համապատասխան վերանայվել են նաև քննական տեղեկագրերի ձևաչափերը: Վերանայման փուլում է գտնվում ՀԳՊԱ ուսանողների շարժունության կարգը:

Ե. Ուսումնական միջավայրի բարելավում

Ուսումնական միջավայրը բարելավելու նպատակով 2023 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ գործողությունները.

- Խեցեգործության լաբորատորիայի համար ձեռք է բերվել կավի մշակման և վերամշակման հատուկ հաստոց,
- Գեղանկարչության արվեստանոցների համար ձեռք է բերվել 30 մոլբերտ և շղարշների հավաքածու (драпировка),
- Գյումրու մասնաճյուղի դեկորատիվ կիրառական արվեստի լաբորատորիայի համար ձեռք է բերվել լազերային փորագրող հաստոց և գրաֆիկական պլանշետ (բարերարի ֆինանսավորմամբ),

- Գյումրու մասնաճյուղի բակում կառուցվել է սպորտային հրապարակ:

Զ. Օտարերկրյա ուսանողներ

2022-2023 ուսումնական տարում ՀԳՊԱ-ում ուսումնառել է 65 օտարերկրյա ուսանող, ինչը կազմում է ուսանողների 6.8%, որից 5-ը՝ Սիրիայի Արաբական Հանրապետությունից, 4-ը՝ Իրանի Իսլամական Հանրապետությունից, 7-ը՝ Լիբանանից, 7-ը՝ Վրաստանից, 35-ը՝ Ռուսաստանի Դաշնությունից, 1-ը՝ Ուկրաինայից, 1-ը՝ Ղազախստանից, 4-ը՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունից, և 1-ը՝ Բրազիլիայից:



Պատկերում բերված տոկոսային հարաբերությունները հաշվարկված են օտարերկրյա ուսանողների ընդհանուր թվի համեմատ:

2023-2024 ուսումնական տարում ՀԳՊԱ-ում ուսումնառում է 64 օտարերկրյա ուսանող, ինչը կազմում է ուսանողների 7%, որից 5-ը՝ Սիրիայի Արաբական Հանրապետությունից, 4-ը՝ Իրանի Իսլամական Հանրապետությունից, 2-ը՝ Լիբանանից, 13-ը՝ Վրաստանից, 36-ը՝

Ռուսաստանի Դաշնությունից, 1-ը՝ Ղազախստանից և 3-ը՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունից:



Պատկերում բերված տոկոսային հարաբերությունները հաշվարկված են օտարերկրյա ուսանողների ընդհանուր թվի համեմատ:

Է. Ուսանողների և դասախոսների շարժունություն

Անդրադառնալով արտասահման մեկնող ուսանողներին՝ պետք է նշել, որ ուսանողների փոխանակման ծրագրի շրջանակներում 2023 թվականի ընթացքում ՀԳՊԱ-ի գործընկեր բուհերում մեկ կիսամյակով ուսումնառել է 9 ուսանող.

- 2 ուսանող՝ Կարոյ Էստերհազիի անվան կաթոլիկ համալսարանում (Հունգարիա),
- 3 ուսանող՝ Կաստելոի արվեստի և դիզայնի դպրոցում (Իսպանիա),
- 1 ուսանող՝ Կրակովի Յան Մատեյկոյի անվան գեղարվեստի ակադեմիայում (Լեհաստան),
- 1 ուսանող՝ Մարսելի գեղարվեստի և դիզայնի բարձրագույն դպրոցում (Ֆրանսիա),

- 2 ուսանող՝ Սանկտ-Պետերբուրգի Շտիգլիցի անվան պետական գեղարվեստա-արդյունաբերական ակադեմիայում (Ռուսաստան):

Նույն ժամանակահատվածում ՀԳՊԱ-ում մեկ կիսամյակով ուսանել է 5 ուսանող.

- 2 ուսանող՝ Մասարիկի համալսարանից (Չեխիա),
- 2 ուսանող՝ Կարոյ Էստերհազիի անվան կաթոլիկ համալսարանից (Հունգարիա),
- 1 ուսանող՝ Շտիգլիցի գեղարվեստա-արդյունաբերական ակադեմիայից (Ռուսաստան):

Դասախոսական կազմի շարժունության սահմաններում 2023 թվականին ՀԳՊԱ-ում հյուրընկալվել է 10 դասախոս.

- 3 դասախոս՝ Կարոյ Էստերհազիի անվան կաթոլիկ համալսարանից (Հունգարիա),
- 3 դասախոս՝ Կրակովի Յան Մատեյկոյի անվան գեղարվեստի ակադեմիայից (Լեհաստան),
- 2 դասախոս՝ Կաստելոի արվեստի և դիզայնի դպրոցից (Իսպանիա),
- 2 դասախոս՝ Արվեստի, դիզայնի և տեխնոլոգիաների ինստիտուտից (Իռլանդիա):

ՀԳՊԱ-ի 2 դասախոսներ և 7 վարչական աշխատակիցներ նույնպես հյուրընկալվել են գործընկեր բուհերում.

- 2 վարչական աշխատակից՝ Կլյուժ-Նապոկայի արվեստի և դիզայնի համալսարանում (Ռումինիա),
- 1 դասախոս՝ Լինցի կաթոլիկ համալսարանում (Ավստրիա),
- 2 վարչական աշխատակից՝ Կարոյ Էստերհազիի անվան կաթոլիկ համալսարանում (Հունգարիա),

- 1 դասախոս և 2 վարչական աշխատակից՝ Արվեստի, դիզայնի և տեխնոլոգիաների ինստիտուտում (Իռլանդիա),
- ռեկտորի պաշտոնակատար Մկրտիչ Այվազյանը հայաստանյան բարձրաստիճան պատվիրակության կազմում մասնակցել է Բրիտանական խորհրդի հայաստանյան մասնաճյուղի կողմից կազմակերպված Լոնդոնի արվեստի համալսարան (Մեծ Բրիտանիա) ճանաչողական այցին:

Ուսանողների, դասախոսների և վարչական կազմի շարժունության ծավալը մեծացնելու նպատակով 2023 թվականի ընթացքում համագործակցության նոր պայմանագրեր են կնքվել հետևյալ ուսումնական հաստատությունների հետ՝

- Կաստելոի արվեստի և դիզայնի դպրոց (Իսպանիա),
- Մալագայի համալսարան (Իսպանիա),
- Գեղարվեստի հունգարական համալսարան (Հունգարիա),
- Կարոյ Էստերհազիի անվան կաթոլիկ համալսարան (Հունգարիա):

Իսկ հաշվետու տարվա դեկտեմբերի դրությամբ, ընդհանուր առմամբ գործում է ուսանողների, պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի փոխանակմանը, համատեղ թեմատիկ ցուցահանդեսների, համաժողովների, աշխատաժողովների կազմակերպմանը վերաբերող շուրջ 33 պայմանագիր արվեստի օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ: Գործընկեր բուհերի ցուցակը ներկայացված է ՀԳՊԱ-ի պաշտոնական կայքէջում՝ http://safa.am/2002-2/:

Կարևոր է նշել, որ 2023-2024 ուս. տարվա դրությամբ 8 գործընկեր բուհի հետ համագործակցությունն իրականացվում է ԷՐԱԶՄՈՒՍ ՊԼՅՈՒՍ-ի շարժունության ծրագրի շրջանակներում, ինչի շնորհիվ ներգրավված ուսանողների և դասախոսների բոլոր ծախսերը՝

ներառյալ ճանապարհածախսը և կեցության ծախսերը իրականացվում են ԷՐԱԶՄՈՒՍ ՊԼՅՈՒՍ ծրագրի բյուջեից: Այդ բուհերն են՝

- Կլյուժ-Նապոկայի արվեստի և դիզայնի համալսարան (Ռումինիա),
- Կրակովի Յան Մատեյկոյի անվան գեղարվեստի ակադեմիա (Լեհաստան),
- Լինցի կաթոլիկ համալսարան (Ավստրիա),
- Կարոյ Էստերհազիի անվան կաթոլիկ համալսարան (Հունգարիա),
- Կաստելոի արվեստի և դիզայնի դպրոց (Իսպանիա),
- Մալագայի համալսարան (Իսպանիա),
- Գրանադայի համալսարան (Իսպանիա),
- Արվեստի, դիզայնի և տեխնոլոգիաների ինստիտուտ (Իռլանդիա):

Ը. Մրցունակության բարձրացում

Կրթական ծրագրերի արդյունավետության և մրցունակության բարձրացման նպատակով ՀԳՊԱ-ի 2023-2027թթ. ռազմավարական ծրագրով որպես խնդիր սահմանված է՝ «Ապահովել առաջատար մասնագետների ներգրավումը և պրոֆեսորադասախոսական կազմի կայունությունն ու մասնագիտական աճը»: Խնդիրը լուծելու համար ՌԾ-ի գործողությունների պլանով նախատեսված է՝

- դասախոսական կազմի վերապատրաստումների կարիքների վերհանում,
- վերապատրաստման փաթեթի և ժամանակացույցի կազմում,
- վերապատրաստումների փուլային անցկացում,
- դասախոսական կազմի ատեստավորման փաթեթի մշակում,
- դասախոսական կազմի ատեստավորման անցկացում:

Գործողությունները իրականացնելու նպատակով 2023 թվականի ընթացքում դուրս են բերվել դասախոսների կարիքները, ստեղծվել է «պրոֆեսորադասախոսական կազմի վարկանիշավորման համակարգի մշակման» աշխատանքային խումբ:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ/ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Այս ոլորտներում ՀԳՊԱ-ի նպատակներն են՝ հետազոտական/ստեղծագործական գործունեության զարգացումն ու միջազգայնացումը, նորարարական գաղափարների և ձեռներեցության կայուն համակարգերի մշակումը, ազգային մշակույթի և գեղագիտական ճաշակի զարգացումը, հասարակության համախմբումը և հասարակության հետ կապերի զարգացումը, ինչպես նաև ՀԳՊԱ-ի հեղինակության և վարկանիշի բարձրացումը: 2023 թվականի ընթացքում նշված նպատակների ուղղությամբ ՀԳՊԱ-ի ձեռքբերումները և կատարված գործունեության արդյունքները հետևյալն են.

Ա. Գիտական հետազոտություններ

Հետազոտության ոլորտում հաշվետու տարում ՀԳՊԱ-ի դասախոսները հայաստանյան պարբերականներում և ժողովածուներում հրապարակել են շուրջ 28 գիտական հոդված, որոնցից 22-ը՝ ՀՀ գրախոսվող մասնագիտական պարբերականներում: Միջազգային գրախոսվող մասնագիտական ժողովածուներում հրապարակվել է 8 գիտական հոդված, այդ թվում՝ 3 հոդված SCOPUS գիտատեղեկատվական շտեմարանում ընդգրկված ժողովածուներում:

2023 թվականի ընթացքում ՀԳՊԱ դասախոսների կողմից հրատարակվել են մի շարք մենագրություններ.

- Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հակոբ Երվանդի Սիմոնյանի և ԱՄՆ Վայդենների համալսարանի մարդաբանության և հնագիտության պատվավոր պրոֆեսոր Միտչել Ս. Ռոթմանի համատեղ՝ *«Շենգավիթ. Քուր-Արաքսյան մշակույթի կենտրոնը Հայաստանում»* մենագրությունը (տպագրվել է անգլերենով և հրատարակվել ԱՄՆ-ում):

- Ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Հայկազուն Գրիգորյանի՝ *«Ինտերիերի և էքստերիերի ճարտարապետությունը Պալյանների ստեղծագործություններում»* մենագրությունը (տպագրվել է թուրքերեն և հրատարակվել Ստամբուլում):
- Ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Հայկազուն Գրիգորյանի՝ *«Հայ քրիստոնեական ճարտարապետությունը և նախաքրիստոնեական մշակույթի ներգործությունը»* մենագրությունը (տպագրվել է հայերեն և հրատարակվել ՀՀ-ում):
- Արվեստագիտության թեկնածու, դոցենտ, ՀԳՊԱ արվեստագիտության և հումանիտար գիտությունների ամբիոնի վարիչ Քնարիկ Գառնիկի Ավետիսյանի՝ *«Հայ հին և միջնադարյան արվեստն ու եկեղեցական գեղանկարչությունը Հայաստանի ազգային պատկերասրահում»* ուղեցույցը (տպագրվել է հայերեն և հրատարակվել ՀՀ-ում):
- Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հակոբ Երվանդի Սիմոնյանի՝ *«Հայկական լեռնաշխարհի հնագույն արվեստը»* մենագրությունը (տպագրվելու է հայերեն և լույս կտեսնի մինչև 2024թ փետրվարի վերջը): Կարևոր է նշել, որ մենագրության տպագրությունը կազմակերպվել է ՀԳՊԱ-ի կողմից՝ Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի ֆինանսավորմամբ:

Հաշվետու տարին արդյունավետ է եղել նաև հանրապետական և միջազգային գիտաժողովների մասնակցության առումով: ՀԳՊԱ արվեստագիտության և հումանիտար գիտությունների ամբիոնի դասախոսները մասնակցել են 14 հանրապետական և 13 միջազգային գիտաժողովների՝ Ֆրանսիայում, Իտալիայում, Շվեյցարիայում, Իսրայելում, Գերմանիայում, Լեհաստանում, Ռուսաստանի Դաշնությունում, Բելառուսում, Թուրքմենստանում և Հայաստանի Հանրապետությունում:

Հետազոտության ոլորտում ՀԳՊԱ-ն ակտիվ համագործակցում է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի հետ: Երիտասարդ արվեստաբանները զեկուցումներով հանդես են եկել Արվեստի

ինստիտուտի կողմից կազմակերպված «Երիտասարդ հայ արվեստաբանների գիտաշրջան» -ում՝ նվիրված ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի 80-ամյա հոբելյանին:

Ակտիվ հետազոտական գործունեություն են իրականացնում նաև ասպիրանտները: ՀԳՊԱ-ի չինացի ասպիրանտ Ժոու Շուհանի «Դիցաբանական վիշապի կերպարը Հին Հայաստանի և Չինաստանի արվեստում» վերնագրով թեկնածուական ատենախոսության նախապաշտպանությունը կայացել է արվետագիտության և հումանիտար գիտությունների ամբիոնում և դրական կարծիքով ուղարկվել է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ՝ պաշտպանության:

Ներկայումս ակադեմիայում սովորում է 7 ասպիրանտ՝ այդ թվում 2 ասպիրանտ Չինական Ժողովրդական Հանրապետությունից:

Հաշվետու տարում հրատարակվել է ՀԳՊԱ-ի «Տարեգիրք» արվեստագիտական և հումանիտար հետազոտությունների գրախոսվող պարբերականի 1-ին համարը, որտեղ ընդգրկված են ՀԳՊԱ-ի դասախոսների, ինչպես նաև այլ գիտական հաստատությունների և բուհերի հեղինակների 7 գիտական հոդված, 1 ասպիրանտի հետազոտություն և ՀԳՊԱ 1 դասախոսի ուսումնամեթոդական աշխատանք: «Տարեգիրք»-ի 2023թ. 2-րդ համարը լույս կտեսնի մինչև 2024 թվականի փետրվար ամսվա ավարտը և կներառի 8 գիտական հոդված, որից 2-ը անգլերեն և ռուսերեն, և 1 ուսումնամեթոդական աշխատանք:

«Տարեգիրք» պարբերականը հրատարակվում է 2004 թվականից և մշտապես ընդգրկված է ՀՀ ԲՈԿ-ի ընդունելի պարբերականների ցանկում: Կարևոր է նշել, որ պարբերականի հեղինակության բարձրացման և միջազգայնացման նպատակով 2023 թվականին փոփոխության է ենթարկվել «Տարեգրքի» խմբագրական խորհուրդը: 2023 թվականին հաստատված խորհրդի կազմում ընդգրկված են ինչպես ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչներ, հանրապետության անվանի արվեստագիտության դոկտոր, պրոֆեսորներ, այնպես էլ արվեստի դոկտորներ և թեկնածուներ Հարվարդի համալսարանից, Իսրայելի Բեն Գուրիոնի համալսարանից, Ուրալի ֆեդերալ համալսարանից, Սանկտ-Պետերբուրգի պետական համալսարանից, Բաթումիի արվեստի պետական համալսարանից:

Բ. Ստեղծագործական գործունեություն

Նպատակ ունենալով խթանել ազգային մշակույթի զարգացմանը և հասարակության գեղագիտական ճաշակի բարձրացմանը՝ կազմակերպվել և իրականացվել են մի շարք միջոցառումներ ՀԳՊԱ-ում, ՀԳՊԱ Գյումրու մասնաճյուղում, Դիլիջանի ստորաբաժանումում և այլ վայրերում, որոնցից հատկանշական են հետևյալները.

1. ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, ՀԳՊԱ Կերպարվեստի ֆակուլտետի դեկան, գեղանկարիչ, պրոֆեսոր Էդիկ Վարդանյանի ինը հայ գրողների դիմանկարների շարքի՝ Դանիել Վարուժան, Վահան Տերյան, Հովհաննես Թումանյան, Խաչիկ Դաշտենց, Հրանտ Մաթևոսյան, Մուշեղ Գալշոյան, Համո Սահյան, Հրաչյա Սարուխան, Արմեն Շեկոյան ցուցահանդեսը Գրականության և արվեստի պետական թանգարանում: Դիմանկարների շարքը հեղինակը նվիրաբերեց Գրականության և արվեստի պետական թանգարանին:
2. ՀԳՊԱ դասախոս Հարություն Ավագյանի «Վիճակ» խորագրով անհատական ցուցահանդեսը «Ալբերտ և Թովէ Բոյաջյան» ցուցասրահում:
3. Դիզայն կրթական ծրագրի ուսանողների «Պրոդուկտ՝ ինտերիեր դիզայն» ցուցահանդեսը «Ալբերտ և Թովէ Բոյաջյան» ցուցասրահում, որտեղ ներկայացվել են առաջին կուրսեցիների աշխատանքները:
4. ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Վիգեն Հովհաննեսի Ղազարյանի 80 ամյակին նվիրված ցուցահանդեսն ու մեծարման ցերեկույթը:
5. ՀԳՊԱ պրոֆեսոր, գեղանկարիչ Կարեն Գասպարյանի առաջին անհատական ցուցահանդեսը «Ալբերտ և Թովէ Բոյաջյան» ցուցարահում:
6. Քանդակագործություն կրթական ծրագրի ուսանող Վահե Եղյանի առաջին անհատական ցուցահանդեսը «Ալբերտ և Թովէ Բոյաջյան» ցուցասրահում:
7. ՀԳՊԱ պրոֆեսոր Նունե Աղբալյանի «Նորաձևությունը որպես սոցիալական երևույթ» դասախոսությունը Ազգային գրադարանում:

8. «Մարդ Աստծո» գեղանկարչական, գրաֆիկական աշխատանքների և քանդակի մրցանակաբաշխությունը «Ալբերտ և Թովէ Բոյաջյան» ցուցարահում:
9. ՀԳՊԱ-ի Դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետի դասախոս Տիգրան Սոսոյանի «Տառարվեստ» խորագրով անհատական ցուցահանդեսը «Ալբերտ և Թովէ Բոյաջյան» ցուցասրահում:
10. Ֆրանկոֆոնիային նվիրված երևանյան միջոցառումների շրջանակում ՀԳՊԱ ուսանողների մասնակցությունը «Համերաշխություն և բազմազանություն» խորագիրը կրող ցուցահանդեսին:
11. Դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողների հաշվետու ցուցահանդեսը «Ալբերտ և Թովէ Բոյաջյան» ցուցասրահում:
12. ՀԳՊԱ ուսանողներ Սևակ Գրիգորյանի, Թամարա Զարմանյանի, Սիրանուշ Վարդանյանի, Նոյեմ Խաչատրյանի, Անի Գալստյանի, Վահե Եղյանի և շրջանավարտներ Արամ Մաշուրյանի, Նարեկ Մինասյանի, Մարիամ Գալստյանի և Տաթևիկ Նալբանդյանի մասնակցությամբ Թավրիզի համալսարանում կայացած ցուցահանդեսը:
13. ՀԳՊԱ-ի ուսանողների և իրանցի 89 արվեստագետների մասնակցությամբ «Կամուրջ Արաքսի վրա» խորագրով ցուցահանդեսը Երևանի Հենրիկ Իգիթյանի անվան Գեղագիտության ազգային կենտրոնում: Բավական ծավալուն ցուցահանդեսը ներառել էր իրանցի 89 արվեստագետի 160 աշխատանք և ՀԳՊԱ-ի 26 ուսանողների 32 աշխատանք: Ցուցահանդեսը կազմակերպվել է ՀԳՊԱ-ի և Թավրիզի իսլամական արվեստի համալսարանի միջև կնքված համագործակցության հուշագրի սահմաններում:
14. ՀԳՊԱ քանդակագործություն կրթական ծրագրի մագիստրատուրայի շրջանավարտ Կամո Ալոյանի անհատական ցուցահանդեսը «Ալբերտ և Թովէ Բոյաջյան» ցուցասրահում:
15. Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հակոբ Սիմոնյանի կողմից կազմակերպված «Մոռացված թագավորություն» խորագրով ցուցահանդեսը

Հայաստանի պատմության թանգարանում: Ցուցահանդեսի սահմաններում թանգարանի 7 ցուցապահարաններում ցուցադրվել են Հայաստանի տարածքում կատարված պեղումների ընթացքում գտնված շուրջ 350 ցուցանմուշ:

16. Գեղանկարչության և գծանկարչության ամբիոնի դասախոսների աշխատանքների ցուցահանդեսը «Ալբերտ և Թովէ Բոյաջյան» ցուցասրահում:
17. ՀԳՊԱ-ի քանդակագործության ամբիոնի դասախոս Սարգիս Բաբայանի հեղինակած Կարեն Դեմիրճյանի քանդակի բացումը Երևանի Մարզահամերգային համալիրի դիմաց:
18. Գեղանկարչության և գծանկարչության ամբիոնի դասախոս Սահակ Պողոսյանի «Խուլի Տունը» խորագրով ցուցահանդեսը Գաֆէսճեան արվեստի կենտրոնի «Արծիվ» և «Սասունցի Դավիթ» պարտեզի սրահներում:
19. ՀԳՊԱ-ի քանդակագործության ամբիոնի դասախոս Սարգիս Բաբայանի «Երկու շարք» խորագրով անհատական ցուցահանդեսը և պատկերագրքի շնորհանդեսը Գեղագիտության ազգային կենտրոնում:

Գ. Մրցույթներ և նախագծեր

ՀԳՊԱ-ի 2023-2027թթ. ռազմավարական ծրագրի համաձայն՝ բուհը հատուկ կարևորություն է տալիս նաև դասախոսների, աշխատակիցների և ուսանողների մասնակցությանը հանրապետական և միջազգային մրցույթներին ու զանազան ստեղծագործական նախագծերին: 2023 թվականին ՀԳՊԱ-ի ուսանողների և աշխատակիցների մասնակցությամբ տեղի են ունեցել մի շարք մրցույթներ, որոնցից կարելի է առանձնացնել.

1. Սանկտ Պետերբուրգի Շտիգլիցի անվան գեղարվեստաարդյունաբերական պետական ակադեմիայի «Ակադեմիական գծանկարչություն» 15-րդ միջազգային մրցույթին ՀԳՊԱ-ի Դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետի Համակարգչային գրաֆիկա կրթական ծրագրի երկրորդ կուրսի 2 ուսանողուհիները

հաղթող են ճանաչվել «Ակադեմիական դիմանկար. Ծավալատարածական լուծում» անվանակարգում՝

- Լիլիթ Տոնեյանն արժանացել է 1-ին կարգի մրցանակի,
- Լիդա Ավետիսյանն արժանացել է 3-րդ կարգի մրցանակի:

2. 2022 թվականի «Լավագույն ուսանող» մրցույթի մրցանակաբաշխության մշակույթ-սպորտ ոլորտում հաղթող են ճանաչվել՝
    - ՀԳՊԱ-ի «Համակարգչային գրաֆիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանող Արման Հարությունյանը զբաղեցրել է 1-ին տեղը,
    - ՀԳՊԱ-ի Դիլիջանի ստորաբաժանման «Դեկորատիվ կիրառական արվեստ» բակալավրի կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանողուհի Սեդա Վարդանյանը զբաղեցրել է 3-րդ տեղը:
3. «Աշխարհը նկարչի աչքերով» մրցույթում՝
    - ՀԳՊԱ պաշտոնական կայքէջի պատասխանատու Մեսրոպ Մեսրոպյանը «Պրոֆեսիոնալ նկարիչ. Կոմպոզիցիա» անվանակարգում գրավել է 1-ին տեղը,
    - ՀԳՊԱ-ի Գրաֆիկա կրթական ծրագրի շրջանավարտ, այժմ՝ ասպիրանտ Միսակ Հարթենյանն իր «Գարուն» կտավով դափնեկիր է ճանաչվել մրցույթի «Ուսանողներ. Բնանկար» անվանակարգում:
4. «Մատենադարանն իմ աչքերով» լուսանկարչական մրցույթում՝
    - ՀԳՊԱ պաշտոնական կայքէջի պատասխանատու Մեսրոպ Մեսրոպյանը գրավել է 3-րդ տեղը:

Գործընկերների հետ կատարված համատեղ նախագծերից կարելի է առանձնացնել.

1. «City of the Future Yerevan Street Art Fest» ծրագրի շրջանակներում ՀԳՊԱ-ի շենքի պատին իրականացվեց իտալացի նկարիչ Անտոնինո Պեռոտտայի «Մշակույթը կփրկի աշխարհը» կարգախոսով մուրալը: Նախագծի ֆինանսավորումը իրականացրել է Հայաստանում Իտալիայի դեսպանությունը:

2. «Իտալերենը ողջ աշխարհում» ծրագրի շրջանակներում ՀԳՊԱ-ում տեղի ունեցած «Արվեստը և կայունությունը» խորագրով նախագիծը:

Դ. Կապեր հասարակության հետ

Հասարակության հետ կապերի ակտիվացման և գործունեության թափանցիկության ապահովման նպատակով պարբերաբար թարմացվում է ՀԳՊԱ պաշտոնական կայք-էջը (http://safa.am), որն առանձնանում է յուրահատուկ ոճով, բազմաբնույթ տեղեկատվության առկայությամբ և հարմարավետությամբ: Ամբողջ տեղեկատվությունը կայք-էջում զետեղված է «օգտակենտրոն» սկզբունքով՝ յուրաքանչյուր օգտվողին հետաքրքրող տեղեկատվությունը գտնելը հեշտացնելու տեսանկյունից: 2023 թվականի ընթացքում ՀԳՊԱ-ի պաշտոնական կայքէջ այցելել է շուրջ 26000 օգտատեր, իսկ այցելությունների ընդհանուր թիվը գերազանցել է 164000-ը:

ՀԳՊԱ-ն ակտիվ է նաև սոցիալական ցանցերում՝ Facebook, Instagram, Twitter, ինչպես նաև պաշտոնական էջ ունի Youtube-ում: ՀԳՊԱ-ի Facebook-ի պաշտոնական էջից օգտվողների թիվը, համեմատած նախորդ տարվա ցուցանիշների, աճել է շուրջ 630-ով և այժմ կազմում է 13240: ՀԳՊԱ-ի Instagram-ի և Twitter-ի պաշտոնական էջերը գործում են 2019 թվականից, և այժմ դրանցից օգտվում է համապատասխանաբար 1809 և 1092 բաժանորդ: ՀԳՊԱ-ի Youtube-ի պաշտոնական էջի օգտատերերի թիվը, նախորդ տարվա ցուցանիշների համեմատ աճել է 445-ով և այժմ կազմում է 3210 բաժանորդ, իսկ դիտումների թիվը աճել է շուրջ 20800-ով և 2023 թվականին կազմել է 29746 դիտում:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ, ՆԵՐԱՌԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ, ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԵՏ ԱՄՈՒՐ ԿԱՊԵՐ

Այս ոլորտում ՀԳՊԱ-ի նպատակներն են՝ ուսանողներին, առանձնահատուկ կարիքներ ունեցողներին, շրջանավարտներին և հանրությանը անհրաժեշտ ծառայությունների մատուցումը և բուհ-գործատու-շրջանավարտ կապի զարգացումը: 2023 թվականի ընթացքում նշված նպատակների ուղղությամբ ՀԳՊԱ-ի կողմից իրականացվել է.

Ա. Իրազեկվածության բարձրացում և ներառականություն

Ուսանողների, դիմորդների և հասարակության շրջանում ՀԳՊԱ-ի ու դրա գործունեության մասին տեղեկատվության տարածման նպատակով նախաձեռնվել են մի շարք միջոցառումներ.

1. *«Կրթություն և կարիերա EXPO 2023»*

   ՀԳՊԱ-ն մասնակցել է ցուցահանդեսին, որտեղ 25 ուսանող ներգրաված է եղել բուհի տաղավարում կազմակերպված աշխատանքներում՝ ներկայացնելով առաջարկվող կրթական ծրագրերը, ընդունելության պայմանները, ուսանողական կյանքը: Ուսանողները պատասխանել են այցելուների հարցերին, նաև կատարվել են 200-ից ավելի այցելուի ճեպանկարներ: Ուսանող-կամավորները ակտիվ մասնակցության և ՀԳՊԱ-ի տաղավարի բազմաբնույթ աշխատանքներում ներգրավվածության համար պարգևատրվել են կամավորության վկայականներով:

2. *«Էրազմուս+ տեղեկատվական օրեր 2023»*

   Հայաստանում Էրազմուս+ գրասենյակի կազմակերպված «Էրազմուս+ տեղեկատվական օրեր 2023» միջոցառումների շրջանակներում Հայկական պետական մանկավարժական համալսարանում. ՀԳՊԱ-ի կրթական ծրագրերի բաժնի ղեկավար, Հայաստանում բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետ Ռ.Մինասյանը

ներկայացրել է «Էրազմուս+ ծրագրերի 2021-2027թթ. համար առաջնահերթություն. ներառական կրթություն» թեմայով զեկուցումը, որում անդրադարձ է կատարվել ՀԳՊԱ-ի համակարգած «Inclusion» Էրազմուս+ ծրագրին և ներառական միջավայր կազմակերպելու և ապահովելու ՀԳՊԱ-ի փորձին:

3. *Իրազեկման օրեր առաջին կուրսեցիների համար*

   Նշված խորագրով պլանավորվել և իրականացվել են հանդիպումներ ՀԳՊԱ 9 կրթական ծրագրերով ընդունված առաջին կուրսեցիների հետ (2023-2024 ուստարի): Ներկայացվել են ՀԳՊԱ-ի ծառայությունները, ուսանողական նպաստից օգտվելու, ակադեմիական բարձր առաջադիմություն ցուցաբերելիս առավելությունների, բացակայությունների, ինչպես նաև հավելյալ (ֆակուլտատիվ) դասընթացների, առաջիկա վերապատրաստումների, ուսանողական ակտիվ գործունեություն ու կամավորություն կատարելու մասին տեղեկություններ: ՀԳՊԱ-ն կարևորում է նման հանդիպումների անցկացումը և ծառայությունների, կազմակերպվող իրադարձությունների և ակադեմիական կյանքին ինտեգրվելու ուղղությամբ իրականացվող միջոցառումների ներկայացումը, որոնք նպաստում են ուսանողական առողջ, մրցակցային, ակտիվ ու ներառական միջավայրի ապահովմանը:

4. *Թիրախային խմբերի բացահայտում*

   ՀԳՊԱ ընդունված բոլոր ուսանողների շրջանում յուրաքանչյուր տարի իրականացվում է հարցում՝ ուսումնառության փորձը և ուսումնական միջավայրը առավել ներառական դարձնելու նպատակով: Մասնավորապես, վեր են հանվում ուսանողների խմբերը, որոնք ներառում են հաշմանդամություն ունեցող անձանց, ազգային փոքրամասնություններին, սոցիալապես անապահով ընտանիքներին, միածնող կամ առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին, մարտական գործողություններին մասնակցած ուսանողներին և այլն:

5. *Բակալավրի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի բաց պաշտպանություններ*

ՀԳՊԱ-ում անցկացվեցին 2022-2023 ուսումնական տարվա ուսանողների աշխատանքների ավանդական դարձած բաց պաշտպանությունները, որոնք նպաստում են ուսումնառության տարիների ընթացքում ուսանողների ձեռք բերած կարողությունների և ամփոփիչ ատեստավորմանը ներկայացրած արդյունքների հանրայնացմանը:

6. *Շրջանավարտների դիպլոմների հանձնման պաշտոնական արարողություն*

Կայացել է 2022/2023 ուսումնական տարվա ՀԳՊԱ-ի Կերպարվեստի և Դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետների շրջանավարտների դիպլոմների հանձնման արարողությունը: Այս տարվա շրջանավարտները առաջինն էին, որ պաշտոնական արարողությանը մասնակցեցին ավարտական համազգեստներով:

Հարկ է նշել, որ համազգեստը նախագծվել է ՀԳՊԱ-ի Դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետի «Հագուստի մոդելավորում» կրթական ծրագրի ուսումնական պրակտիկայի շրջանակներում և կարվել է ՀԳՊԱ-ի հագուստի նախագծման լաբորատորիայում տարբեր կուրսերի ուսանողների, ինչպես նաև շրջանավարտների մասնակցությամբ:

7. *Ակադեմիական շարժունության մասին տեղեկատվական հանդիպումներ*

Կազմակերպվել են մի շարք միջոցառումներ՝ միտված ներկայացնելու ՀԳՊԱ-ում ուսանողների և դասախոսների միջազգային շարժունության հնարավորությունները և տեղի ունեցած շարժունությունների արդյունքները.

- «Էրազմուսի հաշվետու ժողով», որի ընթացքում Արտաքին կապերի բաժինը ներկայացրել է ՀԳՊԱ-ի գործընկեր բուհերը և կազմակերպությունները, շարժունության ծրագրերը և գործող ընթացակարգերը, իսկ միջազգային շարժունության ծրագրերին մասնակցած դասախոսները և ուսանողները ներկայացրել են իրենց հաշվետվությունները՝ կիսվելով ձեռք բերված փորձով:
- «Տարեկան ամփոփիչ հանդիպում», որի ընթացքում ՀԳՊԱ-ի բոլոր հետաքրքրված ուսանողները և աշխատակիցները ծանոթացան 2023

թվականի գարնանը շարժունության ծրագրերին մասնակցած ուսանողների հաշվետվություններին:

- «Հանդիպում Դիզայնի եվրոպական համալսարանի (Istituto Europeo di Design) ներկայացուցչի հետ», որի ընթացքում ներկայացվեց համալսարանի, կրթաթոշակների տրամադրման, երկարատև և կարճատև ուսումնական ծրագրերի մասին տեղեկատվությունը, ինչպես նաև տվյալ բուհում «Էրազմուս+» ծրագրի հնարավորությունների մասին:

Կրթության հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին բացահայտելուց զատ ՀԳՊԱ-ն վարձավճարների մասնակի փոխհատուցում է տրամադրում մի շարք թիրախային խմբերի: 2023 թվականի ընթացքում բուհի կողմից ուսման վարձի մասնակի փոխհատուցում ստանալու համար դիմել է 235 ՀԳՊԱ ուսանող, որոնցից 145-ը (61.7%) բավարարվել է, իսկ 90-ը (38.3%)՝ մերժվել անբավարար առաջադիմության կամ համապատասխան հիմքեր չներկայացնելու պատճառով:



Ուսման վարձի մասնակի փոխհատուցում ստացած ուսանողները օգտվել են զեղչի իրավունքից հետևյալ հիմքերով.



Բ. Աշխատաժողովներ ուսանողների համար

Ուսանողների փորձը հարստացնելու նպատակով 2023 թվականի ընթացքում ՀԳՊԱ-ում կազմակերպվել են հետևյալ միջոցառումները.

1. Կրակովի գեղարվեստի ակադեմիայի պատվիրակության այց, որի ընթացքում դասախոսությամբ հանդես է եկել Անետա Սինիեվսկան «Թվային գրաֆիկա. 3D մոդելավորում» թեմայով:
2. Կրակովի գեղարվեստի ակադեմիայի դասախոս Մատեուշ Օտրեբան հանդես է եկել «Գծանկարչություն և գրաֆիկա» թեմայով դասախոսությամբ:
3. «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի մրցույթները» թեմայով աշխատաժողով, որը միտված էր սովորողների, երիտասարդ դասախոսների ու գիտնականների շրջանում հետազոտության ոլորտում առանցքային խնդիրների ծանոթացմանը և միջազգային հարթակներում գործունեության ծավալմանը:

Գ. Լրացուցիչ ծառայություններ

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիան հիմնական կրթական ծրագրերից զատ իրականացնում է նաև նախապատրաստական դասընթացներ ապագա դիմորդների և բոլոր այն քաղաքացիների համար, որոնք ցանկություն ունեն գիտելիքներ և հմտություններ ձեռք բերել կերպարվեստի, կիրառական արվեստի և դիզայնի ոլորտներում: 2023 թվականի ընթացքում նախապատրաստական դասընթացներում ներգրավված է եղել 127 մասնակից, որից 69-ը՝ 2022-2023 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում, իսկ 58-ը՝ 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակում:

Հիմնական կրթական ծրագրից բացի ՀԳՊԱ-ի ուսանողների համար կազմակերպվում են նաև անվճար ֆակուլտատիվ դասընթացներ՝ անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, իտալերեն, իսկ օտարերկրյա ուսանողների համար՝ նաև հայերեն: Ֆակուլտատիվ դասընթացներում 2023-2024 ուսումնական տարում ներգրավված է 126 ուսանող: Անվճար դասընթացներում ներգրավված ուսանողների վիճակագրական պատկերը հետևյալն է՝

2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.	2023թ.
115	117	190	234	126

Ուսանողներին առաջարկվող լրացուցիչ դասընթացների ցանկը հարստացնելու նպատակով ՀԳՊԱ-ում որոշակի քայլեր են ձեռնարկվել, մասնավորապես՝ պլանավորվել է փափուկ հմտությունները զարգացնող նոր դասընթացների մշակումը, ինչին մեծապես կօժանդակի Էրազմուս+ նոր «DeSIRe» դրամաշնորհային ծրագրում ՀԳՊԱ-ի ներգրավումը և մասնակցությունը՝ սկսած 2024 թվականից:

Դ. Համագործակցություն գործատուների հետ

Նորարարական գաղափարների և ձեռներեցության կայուն համակարգերի ձևավորման և գործընկերային կապերի զարգացման նպատակների իրականացման շրջանակներում համատեղ նախագծեր մշակելու և իրականացնելու նպատակով համագործակցության հուշագրեր են կնքվել դիզայնի և արվեստի ոլորտներում գործող մի շարք առաջատար մասնագիտական կազմակերպությունների և բարեգործական ընկերությունների հետ, դրանք են.

1. «Նորաձևության և դիզայնի պալատ» ՀԿ,
2. «Armnomads games» («Արմնոմադս» ՍՊԸ),
3. «Rockbite Game»-ը («Ռեֆլեքսիվ լաբս» ՍՊԸ),
4. Backbone Branding-ը («Արթստեփ» ՍՊԸ),
5. «AMAA “Shogh” Day Center»-ը,
6. Massiv. Design («Մեսսիվ.» ՍՊԸ),
7. «Liver» արտ մենեջմենթ ՍՊԸ-ն:

Հուշագրերը նախատեսում են կրթական և մասնագիտական ոլորտում համատեղ մի շարք երկարաժամկետ ծրագրերի և իրադարձությունների կազմակերպում և անցկացում: Արդեն իսկ 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում ՀԳՊԱ-ի «Համակարգչային գրաֆիկա» (Գրաֆիկական դիզայն, Խաղարվեստ, Վեբ և հավելվածների դիզայն), «Կիրառական արվեստ» (Խեցեգործություն) «Ինտերիերի դիզայն» և «Արդյունաբերական դիզայն» նոր մոդուլային կրթական ծրագրերով «Համագործակցային նախագիծ» մոդուլի սահմաններում «Armnomads games», «Rockbite Game», «Backbone Branding», «Massiv. Design» ընկերությունների հետ համագործակցությամբ ուսանողները իրականացրել են 9 «իրական» խմբային նախագիծ, որոնց արդյունքները հաջողված են համարել նշված ընկերությունները: Ստացված արդյունքները կներառվեն տվյալ կազմակերպությունների պրոդուկտներում: Եվս 3 «իրական» խմբային նախագծում որպես պատվիրատու է ներկայացել ՀԳՊԱ-ն: Վերոնշյալ մոդուլը ՀԳՊԱ-ի կրթական ծրագրերի շրջանակում իրական նախագծերի կատարման առաջին քայլն է, հաջորդ ուսումնական տարում իրական նախագծերի թիվը կգերազանցի 100-ը:

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2023-2027 թվականների ռազմավարական ծրագրի համաձայն՝ առաջնորդության և արդյունավետ կառավարման ոլորտում ՀԳՊԱ-ի նպատակներն են՝ կառավարման համակարգի ճկունության և ռեսուրսների արդյունավետության մեծացումը և որակի ապահովման գործընթացների արդյունավետության բարձրացումը: 2023 թվականի ընթացքում այս նպատակի ուղղությամբ ՀԳՊԱ-ի կողմից կատարված գործունեության արդյունքներն են.

Ա. Կառավարման համակարգ

2023 թվականի ընթացքում ՀԳՊԱ-ի կառավարման համակարգը բարելավելու նպատակով մի շարք քայլեր են իրականացվել բուհի ուսումնական գործընթացներում էլեկտրոնային համակարգերի ներդրման ուղղությամբ: Մասնավորապես՝

- դասախոսական կազմի ծանրաբեռնվածության փորձարկում,
- դասացուցակի կազմում,
- ուսանողների հաճախման մատյանների փորձարկում՝ դասախոսների և դեկանատների մակարդակներում,
- քննական տեղեկագրերի կազմում և փորձարկում:

Հաշվի առնելով նախորդ տարիներին կատարված աշխատանքները՝ 2023 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ էլեկտրոնային համակարգի միջոցով հնարավոր է իրականացնել՝

- ուսանողների և դասախոսների հաշվառումը,
- ուսանողների առաջադիմության հաշվառումը,
- ուսանողների հաճախելիության հաշվառումը,
- ավարտական տեղեկագրերի և դիպլոմների հավելվածների գեներացումը,
- ամբիոնների կիսամյակային ծանրաբեռնվածության կազմումը,

- դասացուցակները և քննաշրջանների ժամանակացույցերի կազմումը:

Կարևոր է նշել, որ ՀԳՊԱ-ում իրականացվող գործընթացների թվայնացումը միտված է բուհի գործունեությունը ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ անաչառ տեղեկատվության հավաքագրմանը, վարչական աշխատակիցների ծանրաբեռնվածության նվազեցմանը և գործունեության արդյունավետության մեծացմանը:

Կառավարման համակարգի բարելավման գործընթացները նախատեսում են նաև պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստումներ և վարկանիշավորում ու վարչական աշխատակիցների վերապատրաստումներ և ատեստավորում: 2023 թվականի ընթացքում իրականացվել են պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստումների վերաբերյալ կարիքների վերհանման հարցումներ և կազմվել են վերապատրաստումների առաջնային և երկրորդական ուղղությունները, իսկ վարկանիշավորման համակարգի մշակման նպատակով ձևավորվել է «Պրոֆեսորադասախոսական կազմի վարկանիշավորման համակարգի մշակման» աշխատանքային խումբ: Վարչական աշխատակիցների վերապատրաստումների ուղղությամբ մի շարք գործողություններ նախատեսված է մեկնարկել 2024 թվականին:

Հաշվի առնելով ՀԳՊԱ-ի ֆինանսական մուտքերի դիվերսիֆիկացման և գործունեության բոլոր հնարավոր ուղղությունների առևտրայնացման հետ կապված 2023-2027թթ. ռազմավարությամբ սահմանված նպատակները և դրանց հասնելու համար առաջացող ընթացիկ խնդիրների լուծման անհրաժեշտությունը՝ ձևավորվել է «Նախագծերից գոյացող եկամուտների բաշխման քաղաքականության և գործիքակազմի մշակման» աշխատանքային խումբ: Աշխատանքային խումբը մեկնարկել և ամփոփում է «ՀԳՊԱ-ի մտավոր սեփականության քաղաքականությունը», որում մտավոր սեփականության և հեղինակային իրավունքի հետ կապված խնդիրներից բացի սահմանվում է նաև տարաբնույթ նախագծերից և պրոդուկտներից գոյացող եկամուտների բաշխման քաղաքականությունը և գործիքակազմը:

Բ. Ինտեգրում բարձրագույն կրթության եվրոպական տարածք

2023 թվականի ընթացքում կատարված ակտիվ բանակցությունների արդյունքում ՀԳՊԱ-ին հաջողվեց դառնալ «ՖիլմԵՄ+» («FilmEU+») ծրագրի ասոցացված անդամ: «ՖիլմԵՄ+»-ն արվեստի ոլորտի 8 առաջատար եվրոպական բուհերի ասոցիացիա է, որին անդամակցում են հետևյալ հաստատությունները տարբեր երկրներից.

1. Լուսոֆոնա համալսարանը (Պորտուգալիա),
2. Արվեստի դիզայնի և տեխնոլոգիաների ինստիտուտը (Իռլանդիա),
3. Կատարողական արվեստների ակադեմիան (Սլովակիա),
4. ԼՈԻԿԱ արվեստների դպրոցը (Բելգիա),
5. ՎԻԱ համալսարանական քոլեջը (Դանիա),
6. Տալինի համալսարանը (Էստոնիա),
7. Լիտվայի երաժշտության և թատրոնի ակադեմիան (Լիտվա),
8. Թատրոնի և կինոարվեստի ազգային ակադեմիա (Բուլղարիա)

«ՖիլմԵՄ+» ծրագրի նպատակներից է ստեղծել ակադեմիական մի միջավայր, որում համատեղ կզարգացվեն հետազոտությունը և նորարարությունը, կկազմվեն հետազոտության և նորարարության, դասավանդման և ուսումնառության մեթոդաբանության վրա հիմնված նորարար և ճկուն համատեղ կրթական ծրագրեր՝ միտված պրակտիկ (իրական) խնդիրների լուծմանը և հանրության կյանքի որակի բարձրացմանը: Ուսանողները և դասախոսներն ազատ շարժունության հնարավորություն կունենան մասնակից տարբեր բուհերում հետազոտություններ կատարելու և ուսումնառելու նպատակով: Վերը նշվածը, ինչպես նաև գործընկեր հաստատությունների միջև սերտ համագործակցությունը թույլ կտան բարձրացնելու մասնակից բուհերի մրցունակությունը և հեղինակությունը միջազգային մակարդակում:

Գ. Որակի ապահովման համակարգ

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի որակի կառավարման համակարգի շարունակական բարելավմանը և որակի ապահովմանն ուղղված գործողությունները նպաստում են ՀԳՊԱ-ում իրականացվող յուրաքանչյուր գործընթացի արդյունավետության բարձրացմանը: 2023 թվականին վերանայվել են ՀԳՊԱ որակի ապահովման մի շարք մեխանիզմներ ու գործիքներ, մշակվել են նորերը:

Կարևորելով շահակիցների արձագանքը ՀԳՊԱ գործընթացների վերաբերյալ՝ 2023թ. ընթացքում իրականացվել են հետևյալ հարցումները՝

- իրազեկվածության գնահատում դիմորդների շրջանում,
- ընդունելության գործընթացի գնահատում 1-ին կուրսեցիների կողմից (ամենամյա հարցում),
- կամընտրական դասընթացների արդյունավետության գնահատում ուսանողների և դասախոսների շրջանում,
- լրացուցիչ դասընթացների արդյունավետության գնահատում ուսանողների շրջանում,
- հանդիպումներ Արցախից բռնի տեղահանված ուսանողների հետ և նրանց կարիքների վերհանում:

ՀԳՊԱ որակի կենտրոնը շարունակաբար դիտարկումներ է իրականացնում և կարծիք ներկայացնում բակալավրի ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի և դրանց պաշտպանության գործընթացի վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ 2023 թվականին ՀԳՊԱ շահակիցների շրջանում իրականացված հարցումներին մասնակցել է 629 ուսանող և 81 դասախոս:

Ստորաբաժանումների գործունեությունը գնահատող հանձնաժողովի գործառույթների շրջանակում որակի ապահովման կենտրոնն օժանդակություն է տրամադրել ստորաբաժանումներին տարեկան պլանների և եռամսյակային ու տարեկան հաշվետվությունների կազմման վերաբերյալ, ինչպես նաև ակտիվ մասնակցություն է

ցուցաբերել ստորաբաժանումների ներկայացրած հաշվետվությունների ուսումնասիրության և արձագանք տրամադրելու գործընթացում:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ա. 2023 թվականի ֆինանսական մուտքերը և ծախսերը

Որպես պետական հաստատություն, ՀԳՊԱ-ն ձևավորելում է բյուջեն թե պետական, և թե այլ աղբյուրներից: Այդ ֆինանսները բաշխելիս այն հաշվետու է հասարակությանը և ՀՀ կառավարությանը:

2023 թվականին ՀԳՊԱ-ի եկամուտները ձևավորվել են պետական բյուջեի հատկացումներից, ուսանողների վարձավճարներից և այլ մուտքերից: ՀԳՊԱ-ի ծախսերը կատարվում են՝ ըստ նախահաշվի, որը կազմվում է՝ հիմք ընդունելով բուհի կառուցվածքային ստորաբաժանումներից ստացած պահանջագրերը: Հատուկ տողով գումար է հատկացվում Ուսանողական խորհրդին՝ ցուցահանդեսների, էտյուդների և այլ միջոցառումների կազմակերպման համար:

2023 թվականին ՀԳՊԱ-ի բյուջեն ձևավորվել է.

ՄՈՒՏՔԵՐ **793 650 158 ՀՀ դրամ**

		ՀԳՊԱ	Գյումրու մասնաճյուղ	Ընդամենը	%
1	Պետական բյուջե	294 728 920	60 972 880	355 701 800	44.8%
2	Ուսանողների վճարներ	285 222 172	24 087 313	309 309 486	39%
3	Նախապատրաստական դասընթացներ	30 611 200	4 175 303	34 786 503	4.4%
4	Այլ մուտքեր	14 392 861	4 905 451	19 298 312	2.4%
5	Նախորդ տարվա բյուջեի մնացորդ	54 736 557	19 817 500	74 554 057	9.4%



Հարկավոր է նշել, որ բյուջեի մուտքերում ներառված չեն ՀՀ բարձրագույն և հետբուհական կրթության մասին օրենքով սահմանված սոցիալական խմբերին պատկանող և բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների վարձավճարների զեղչով պայմանավորված գումարները: 2023 թվականի ընթացքում վերոնշյալ խմբերին պատկանող 294 (որից 23-ը՝ Գյումրու մասնաճյուղում) ուսանողի (վճարովի հիմունքներով սովորողների 50%, իսկ Գյումրու մասնաճյուղում՝ 13.2%) հատկացված գումարային զեղչը կազմել է 32 251 000 դրամ, այդ թվում՝ 21 (որից 5-ը՝ Գյումրու մասնաճյուղում) ուսանողի վարձը փոխհատուցվել է 100%-ի չափով՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ-ից ստացված ցուցակի, փոխատեղման մրցույթի արդյունքում մինչև 0.1 միավորի տարբերությամբ վճարովի համակարգում մնացած 8 ուսանողների և 10 միակողմանի ծնողազուրկ ուսանողների ուսման վարձը զեղչվել է 50%-ի չափով:

2023 թվականի ընթացքում կատարված ծախսերը հետևյալն են.

ԾԱԽՍԵՐ **720 627 684 ՀՀ դրամ**

		ՀԳՊԱ	Գյումրու մասնաճյուղ	Ընդամենը	%
1	Աշխատավարձ	501 104 501	66 876 465	567 980 966	78.8%
2	Պետական հարկեր	12 264 959	1 296 862	13 561 821	1.9%
3	Գնումներ	23 622 629	4 927 767	28 550 396	4%
4	Ծառայություններ	37 577 860	9 324 818	46 902 678	6.5%
5	Աշխատանքներ	32 007 478	7 483 502	39 490 980	5.5%
6	Գործուղում	407 862	438 000	845 862	0.1%
7	Կրթաթոշակ	16 217 650	2 392 900	18 610 550	2.6%
8	Ուսանողական խորհուրդ	989 000	-	989 000	0.1%
9	Այլ ծախսեր	3 508 450	186 980	3 695 430	0.5%



Կարևոր է նշել, որ ՀԳՊԱ-ի ուսանողների և անձնակազմի անվտանգությունն ապահովելու նպատակով բուհ-ը ստիպված է եղել կատարել ՀՀ Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հայտնաբերված թերությունների շտկման աշխատանքներ, որոնք ՀԳՊԱ-ի 2023 թվականի բյուջեով նախատեսված չէին, և որոնց ընդհանուր արժեքը կազմել է շուրջ 32 000 000 ՀՀ դրամ:

Արդյունքում՝ 2024 թվականի համար որպես մնացորդ փոխանցվող գումարը կազմում է 73 025 822 ՀՀ դրամ:

Բ. Միջազգային ծրագրերից և նախագծերից գոյացող ֆինանսական մուտքեր

Նախկինում ՀԳՊԱ-ում իրականացված «GOVERN», «ESPAQ», և «INCLUSION» ԷՐԱԶՄՈՒՍ+ ծրագրերի շրջանակում բուհի հաշվեկշռին մնացել է շուրջ 49 579 եվրո: ԷՐԱԶՄՈՒՍ+ ծրագրերից մնացած գումարը 2024 թվականի ընթացքում նախատեսվում է ուղղել ՀԳՊԱ-ի լաբորատոր բազայի բարելավմանը:

Հայկական բարեգործական ընդհանուր միության, Creative Armenia-ի և Եվրոպական միության ֆինանսավորմամբ իրականացվող «Կատապուլտ» ստեղծարար աքսելերացիոն ծրագրի հետ համագործակցության շրջանակում ՀԳՊԱ-ի Գյումրու մասնաճյուղում 2024 թվականին կստեղծվի FabLab՝ միտված դիզայնի և արվեստի ոլորտներում թվային և իրական նախատիպերի մշակմանը և զարգացմանը: ՀԳՊԱ-ի Գյումրու մասնաճյուղի FabLab-ի հիմնադրման համար նախատեսված է շուրջ 150 000 եվրո, որից գնվող սարքավորումների նախնական բյուջեն կազմում է 106 777 եվրո:

2024 թվականին կմեկնարկի նաև ԷՐԱԶՄՈՒՍ+-ի նոր «DeSIRe» ծրագիրը, որի շրջանակում ՀԳՊԱ-ի ընդհանուր ֆինանսավորումը կկազմի 61 323 եվրո: Արդեն իսկ 2024 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում ձեռքբերման ենթակա տեխնիկայի բյուջեն կազմում է 19 300 եվրո:

Այսպիսով՝ ՀԳՊԱ-ի զարգացման թիմի կողմից նախապես կատարված աշխատանքների արդյունքում 2024 թվականին միջազգային ծրագրերից և նախագծերից բուհի լաբորատոր բազայի զարգացմանը լրացուցիչ կուղղվի շուրջ 175 656 եվրո:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Այսպիսով՝ կարելի է նշել, որ 2023 թվականը եղել է բավական արդյունավետ թե՛ կրթական ծրագրերի ու ակադեմիական միջավայրի զարգացման, թե՛ հետազոտական ու ստեղծագործական գործունեության բարելավման, թե՛ այլ ռազմավարական նպատակների իրականացման տեսանկյունից: ՀԳՊԱ-ն բավականաչափ ներդրումներ է իրականացրել բուհի զարգացման շարունակականության ապահովման ուղղությամբ:

Սակայն, դեռ մարտահրավերներ կան, երբ խոսքը գնում է միջազգային չափանիշներին համահունչ կրթության տրամադրմանը: Խնդիրներն առավել շոշափելի են հետևյալ ուղղություններով՝

- նոր ֆիզիկական տարածքի ձեռքբերում և վերանորոգում,
- միջազգային պահանջներին համապատասխանող ուսումնական միջավայրի ստեղծում, մասնավորապես՝ ժամանակակից սարքավորումներով լաբորատոր հագեցվածության ապահովում և հատուկ կարիքներ ունեցողների համար համապատասխան հարմարությունների ստեղծում,
- պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի վերապատրաստում:

Ամփոփելով՝ կարելի է նշել, որ ՀԳՊԱ-ն իր ողջ ներուժն ուղղում է բարելավելու ուսումնական և այլ ծառայությունների որակը և կշարունակի աշխատել նշված մարտահրավերները հաղթահարելու ուղղությամբ: